- Դուդուկը, զուռնան ու պարկապզուկն այն նվագարաններն են, որոնք Հայաստանում սիրված ու լայնորեն տարածված են, ընդ որում՝ պարկապզուկն ու զուռնան՝ գյուղերում, իսկ դուդուկը՝ ամենուրեք:

Դուդուկ

Դուդուկ, նայ, նեյ, հայկական ծիրանափող:

Դուդուկի տեսակները տարածված են Մերձավոր Արևելքում, Ճապոնիայում, Չինաստանում, Կովկասում և այլուր: Հնագույն նմուշները հայտնաբերվել են Հին Եգիպտոսում:

Հայկական դուդուկի պատմությունն սկզբնավորվել է Տիգրան Բ Մեծ արքայի (Ք. ծ. ա. 95–55 թթ.) ժամանակներից:

Հայկական դուդուկն առավելապես պատրաստում են ծիրանենու կամ տանձենու փայտից: Փողն ունի 8, հակառակ կողմում՝ 1 կամ 2 ձայնանցք:

Փողային այլ գործիքներից առանձնանում է թավշյա նուրբ տեմբրով և հուզականությամբ:

Նշանավոր դուդուկահարներ են՝ Մ. Մարգարյանը, Լ. Մադոյանը, Վ. Հովսեփյանը, Ջ. Գասպարյանը, Գ. Մինասովը (Մինասյանը), Գ. Դաբաղյանը, Կ. Սեյրանյանը և ուրիշներ:

2005 թվականին հայկական դուդուկի երաժշտությունը ճանաչվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ոչ նյութական մշակութային ժառանգության գլուխգործոցներից: